ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Երասխ, yeraskh.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2017 թվականի N 1

ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

հաստատել Երասխ համայնքի 2017թվականի հունվարի 17-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

-Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը /2017-2021թթ./ հաստատելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՐԱԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Երասխ, yeraskh.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2017 թվականի N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ /2017-2021ԹԹ./ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը /2017-2021թթ./՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՐԱԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Երասխ համայնքի ավագանու 2017 թվականի
հունվարի 17ի թիվ 2 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
(2017-2021ԹԹ.)

2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀՁՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....
3. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում....
4. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....

Եզրափակում.....

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը մինչև 2021 թվականը, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքում առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ հաշվի են առնվել մի շարք գործոններ՝տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլն: Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է չորս բաժիններից՝ 1. Համայնքի իրավիճակի նկարագրություն. 2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում. 3. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում. 4. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում: Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել համայնքի զարգացման հեռանկարները , ուժեղ և թույլ կողմերը: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Երասխ, նախկինում Արազդայան՝ վերանվանվել է 1968թվականից: 1940-ական թվականներին կառուցվել է 15 առանձնատուն՝ կայարանամերձ տարածքում կայարանի աշխատողների համար: Համայնքի տարածքի ստորգետնյա ջրերի մակարդակը բավականին բարձր է՝ որոշ տեղերում 0.30-0.50 մետր՝ գետնի մակերևույթից: Շատ են ճահճուտները, որի պատճառով ստեղծված հակասանիտարական պայմանները հաշվի առնելով հետագայում համայնքը կառուցվել էԵրևան – Նախիջևան մայրուղու արևելյան կողմում, որտեղ ցածր է նաև ստորգետնյա ջրերի մակարդակը: Տարածությունը՝ 2136հա, բնակչությունը՝ 918:

Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 35կմ է: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 800 մետր բարձրության վրա, դեմ-դիմաց Արարատ լեռան, դեմ-դիմաց թուրք-օմոնականների որջի:

Հայաստանի Հանրապետության հարավային դարպասն է՝ հարևանությամբ Նախիջևանի, Իրանի և Թուրքիայի/հեռավորությունը 1-5 կմ/:

Կլիման- ձմեռը ցրտաշունչ է, ամառը՝ շոգ, որի պատճառով համայնքում տարածվում է մալարիան՝ վարակի առաջացման պատճառը մոծակներն են: Վարակը հիմնականում փոխանցվում է առողջ մարդուն անոֆելես ցեղին պատկանող մոծակի միջոցով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հաշվառված են 918 բնակիչ,

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ /0-6 տ./-86

2. Բոլորոցապասեր 77-177-114
3. 18-63 տարեկան -612
4. 63 և ավելի- 63
5. Թոշակառուներ- 81
6. Հաշմանդամներ -11
7. Աշխատունակներ-525
8. Փախստականներ-50 ընտ. 148
9. Գործազուրկներ -182
10. Ընտանիքներ /ծխերի/ թիվը-220
11. Գրանցվածներ 'փարոս' ընտանեկան նպաստների համակարգում-75

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որը ընտրվում է հինգ տարին մեկ անգամ: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ՝՝Տեղական ինքնակառավարման մասին՞՞ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ,,Տեղական ինքնակառավարման մասին՞՞ Հայսատանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18 – ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանի/բաղկացած 5 անդամից/ : Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Աշխատակազմի քարտուղար	-1 հաստիք
Առաջատար մասնագետ	-2 հաստիք
Առաջին կարգի մասնագետ	-1 հաստիք
Երկրորդ կարգի մասնագետ	- 1 հաստիք
Հավաքարար	-1 հաստիք
Պահակ	-1 հաստիք
Գրադարանավար	-1 հաստիք

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Շենքային պայմանները վատ են, գույքը հնամաշ, համալրված է համակարգչային տեխնիկայով: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 2010-2011թթ՝ «Հազարամյակների մարտահրավեր» ծրագրով, որը պատկանում է ջրային տնտեսությանը: Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի , անհրաժեշտ է վերանորոգել ճանապարհներ և փողոցներներ:

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14-03-1997թ. Թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով.

Վարչական շենք /կիսակառույց/	-1 հատ
Ներհամայնաքային նշանակության ճանապարհներ և փողոցներ	-7 կմ

Գաստրջսեր -4 հա
Գերեզմանատուն -4 կմ
Ներհամայնաքային տեխնիկա կան օգտագործման ջրագիծ

Երասխի համայնքապետարանի գույքացանկը

հ/հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քաստացի առկա	Քաստացի
1	Հորքային մղիչ	հատ	1	1
2	Հորքային մղիչի տրանսֆորմատոր	հատ	1	1
3	VAZ 2107	հատ	1	1
4	Դրոշների հենապուն/օղակաձև հրապարակ/	հատ	25	25
5	հեռուստացույց	հատ	1	1
6	Չիրկիզվող պահարան	հատ	1	1
7	Երկաթե փեղկերով պահարան	հատ	1	1
8	Ջրի ապարատ	հատ	1	1
9	Պահարան /4 փեղկով/	հատ	4	4
10	Գրասեղան	հատ	2	2
11	Համակարգչի սեղան	հատ	2	2
12	Գրասենյակային աթոռ	հատ	1	1
13	Պտտվող գրասենյակային աթոռ	հատ	8	8
14	աթոռներ	հատ	1	1
15	Պահարան /3 դարակով/	հատ	1	1
16	Գրապահարան	հատ	3	3
17	համակարգիչներ	հատ		
	Այդ թվում՝	հատ	3	3
	ստեղնաշար	հատ	3	3
	մկնիկ	հատ	3	3
	Էլ. կուտակիչ	հատ	3	3
	մոնիտոր	հատ	1	1
18	Պրինտեր Canon PC – D340	հատ	1	1
19	Պրինտեր Canon	հատ	1	1
20	Պրինտեր սկաներ	հատ	1	1
21	Նկար	հատ	1	1
22	Ջինանշան	հատ	1	1
23	Պատի ժամացույց			

1.4 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երասխ համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Երասխ համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն՝ շաբաթը մեկ-երկու անգամ՝ համայնքի բնակչի սեփական մեքենայով/կցասայլով/ , սակայն համայնքը չունի աղբատար մեքենա : Երասխ համայնքում փողոցները հիմնականում ասֆալտված են գիշերային լուսավորությամբ : Գերեզմանատունը ցանկապատված չէ : Համայնքը գազաֆիկացված չէ: Համայնքում խմելու ջուր կա, սակայն ամռանը շուրջօրյա չէ:

1.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կան բազմաբնակարան բնակելի շենքեր և բնակելի առանձնատներ: Համայնքում կա 160 առանձնատուն 7338 քառ. մ տարածքով, 14 մասնավոր շենք:

Բասապարասր կարրք ուսեցող ըստասրքսերր թրկը 15-ից ավել է, որը [illegible] տարի:Կան 8 կիսակառույց շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն շարունակվել:Բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների կառուցման և վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ չեն կառուցվում:

1.6 Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 260մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 50 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 150մարդ, 50-60 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների:Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն: Համայնքի տարածքում գործում են 6 խանութներ,1 գազալցակայան , հանրային սննդի օբյեկտ : Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված և վարձակալված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից և անասնապահությունից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը:

1.7 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4872,31 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3365,53, բնակելի շինությունների տակ հողեր՝ 60,98 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 36,68 հա, Էներգետիկայի, կապի, տրանսպորտի տակի հողեր՝ 16,71 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 454,43հա, ջրային ֆոնդի հողեր՝ 931,54, հա:

Երասխ համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ 1-ում

NN	Նպատակային Նշանակություն	Հոդատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ											
					<< քաղաքացիների	<< իրավաբանական անձանց	համայնքային				պետական				Օտար պետության <<	
							ընդամենը (5+6+7)	տրված անհատական օգտագործման	տրված վարձակալություն	օգտագործման և վարձակալ.	ընդամենը (9+10+11)	տրված անհատական օգտագործման	տրված վարձակալություն	օգտագործման և վարձակալ.		
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1,1	1. Գյուղատնտեսական	վարելահող		451,68	47,65		399,54		377,50	22,04	3,78			3,78	0,71	
1,2		բազմամյա տնկարկներ		55,00			55,00		55,00							
1.2.1		այդ թվում՝ պտղատու		28,00			28,00		28,00							
1.2.2		խաղողի այգի		27,00			27,00		27,00							
1.2.3		այլ բազմամյա														
1,3		խոտհարք		320,25	118,51		201,74		154,30	47,44						
1,4		արոտ		966,76			245,56		100,00	145,56	721,20		700,00	21,20		
1,5		այլ հողատեսքեր		1571,84	4,20	1,15	842,37		288,03	554,34	724,12		651,00	73,12		
1		Ընդամենը		3365,53	170,36	1,15	1744,21		974,83	769,38	1449,10		1351,00	98,10	0,71	
2,1	2.Բնակավայրերի	բնակելի		33,78	32,72		1,06			1,06						
2.1.1		այդ թվում՝ տնամերձ		33,78	32,72		1,06			1,06						
2.1.2		արտադրական (ամառ-Ս														
2,2		հասարակական		10,56	5,34		3,00			3,00	2,22	1,60		0,62		
2,3		խաղ. կառուցապատման		0,67	0,02		0,65			0,65						
2,4		ընդհանուր		7,17			7,17			7,17						
2,5		այլ հողեր		8,80	0,01	1,15	7,64			7,64						
2		Ընդամենը		60,98	38,09	1,15	19,52			19,52	2,22	1,60		0,62		
3,1	3. Արդյունաբ., ընդերքօգտ.	արդյունաբերության		24,27	8,66	15,61										
3,2		գյուղտնտեսական,		12,41			12,41			12,41						
3,3		պահեստարանների														
3,4		ընդերք օգտագործման														
3		Ընդամենը		36,68	8,66	15,61	12,41			12,41						
4,1	4.Էներգետիկայի, տրանսպորտ	էներգետիկայի		0,25			0,25			0,25						
4,2		կապի									16,41	1,25		15,16		
4,3		տրանսպորտի		16,41							0,05			0,05		
4,4		կոմունալ		0,05							16,46	1,25		15,21		
4		Ընդամենը		16,71			0,25			0,25	451,42	451,42				
5,1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական		451,42												
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ									451,42	451,42				
5.1.2		արգելավայրեր		451,42												
5.1.3		ազգային														
5,2		առողջարարական														
5,3		հանգստի		3,01			3,01			3,01						
5,4		պատմական և		454,43			3,01			3,01	451,42	451,42				
5		Ընդամենը														
6	6.Հատուկ նշանակության	Ընդամենը		6,44							6,44			6,44		
7,1	7. Անտառային	անտառ														
7,2		թփուտ														
7,3		վարելահող														
7,4		խոտհարք														
7,5		արոտ														
7,6		այլ հողեր														
7		Ընդամենը									21,01			21,01		
8,1	8. Ջրային	գետեր		21,10						0,50						
8,2		ջրամբարներ		0,50			0,50			45,78	755,00		755,00			
8,3		լճեր		800,78			45,78			1,78	4,76			4,76		
8,4		ջրանցքներ		6,54			1,78				102,71			102,71		
8,5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ		102,71						48,06	883,48		755,00	128,48		
8		Ընդամենը		931,54			48,06									
9,1	9. Պահուստային	արուտներ														
9,2		ավազուտներ														
9,3		ճահիճներ														
9,4																
9,5		այլ անօգտագործելի														
9		Ընդամենը														
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)			4872,31	217,11	17,91	1827,46		974,83	852,63	2809,12	454,27	2106,00	248,85	0,71	

1.8 Գյուղատնտեսություն

Համայնքում զբաղվածության հիմնական ճյուղը անասնապահությունն է և հողամշակությունը, զբաղվում են բանջարա- բոստանային կուլտուրաների արտադրությամբ : Համայնքում անասնապահությամբ զբաղվում են 64 ընտանիք

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	278
	Կովեր	110
2.	Խոզերի գլխաքանակը	58
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	880
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	5
5	Ձիերի գլխաքանակը	15
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1320
7.	Նապաստակների և ճագարների գլխաքանակը	-
8.	Մեղվաընտանիքների քանակը	56

1.9 Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր-օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար:
Համայնքի բնակիչներից շատերը դեռևս տնտեսական, հաճախ նաև շինարարական աղբը թափում են աղբի համար անթույլատրելի տարածքներում: Սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքները դեռևս շատ են: Տնտեսության առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը կօժանդակի աղբահանության աշխատանքների օպերատիվ իրականացմանը: Այդպիսի խնդիրներից են աղբահան մեքենաներ և աղբամաններ չունենալը : Աղբահանության ծավալների ավելացման դեպքում նաև առաջանում է մեքենայի ձեռքբերման անհրաժեշտություն:

1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ է, ունի որոշ հատվածներում նորոգումների խիստ կարիք : Ներհամայնքային ճանապարհները բարեկարգ չեն, խճապատված չեն , կարիք ունեն մշտական նորոգումների:Համայնքի ներսում ավտոկանգառներ չկան: Միջհամայնքային ,

սերռասայսքայրս և սրջպետական ճանապարհները անցանելի են և գեղատեսիլ
վիճակում:

1.11ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի միջնակարգ դպրոց , կառուցվել է 1977 թվականին , որը կոսմետիկ վերանորոգվել է 1997թվականին, իսկ 3 մասնաշենքերից 2 –սի տանիքները հիմնովին վերանորոգվել է 2011 թվականին և 2013 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին : Դպրոցի շենքը ունի կապիտալ վերանորոգման կարիք, գազաֆիկացված չէ ՝ ունի վերանորոգված սան հանգույց, կոյուղի : Դպրոցի ընդհանուր տարածքը՝ 10 հա : Համայնքի աշակերտների թիվը 124 որից նախակրթարանի աշակերտները՝ 14, դպրոցը ունի 22 ուսուցչական անձնակազմ: Համայնքը չունի մսուր - մանկապարտեզ :

1.12 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի բուժ կետ , որը տեղակայված և գործում է բազմաբնակարան եռահարկ շենքի 1-ին հարկում՝ սեփական բնակարանում: 2008 թ.-ին նորոգվել է ՎՈՎԱ ծրագրով՝ համայնքապետարանի համաֆինանսավորմամբ: Բուժ. կետը ունի մեկ աշխատող , չունի սարքավորումներ :

1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի մշակույթի տուն ,սպորտ հրապարակ , դրանով դժվարանում է երեխաների և երիտասարդների հետ տարվող աշխատանքները , իսկ համայնքի գրադարանը ունի 3692 միավոր գիրք ,որը ևս տեղակայված է բազմաբնակարան եռահարկ շենքի 1-ին հարկում՝ սեփական բնակարանում:

1.14 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են համապատասխանաբար առևտրի օբյեկտներ՝ հիմնականում 6 զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով՝ մանրածախ առևտրով, համայնքում գործում է 1 արագ սննդի սպասարկման կետ , 1 ավտոգազալցակայան և 1 հեղուկ վառելիքի լիցքավորման կետ, նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության ստանալու համար:

1.15 ՀԱՄԱՅՆՔԻՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- բնակչության հայրենասիրությունը
- համայնքի սահմանամերձ լինելը
- Երևան-Երասխ երկաթգծի գոյությունը և երկաթգծի կայարանը
- համայնքի վարչական տարածքում է գտնվում Երասխի գինու գործարանը, հանքային ջրերի, Հայգյուղ քիմիա և մի շարք այլ շենքեր ու շինություններ
- աշխատուժի առկայությունը
- աշխատուժի ավելցուկը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿԻՐԱՌԵՐԸ

- Գործազրկությունը:
- Սոցիալապես անապահով խավի բարձր տոկոսը:

- Բնակլիմայական ցուրտ պայմաններ ամռանը շոգ
- Համայնքի ավազային հողերը, ջրի կորուստը:
- Երիտասարդության արտահոսքը
- Ծնողաբերության մակարդակի անկումը
- Գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը
- Տնամերձ հողամասերի անջրելիությունը
- Բուսականության բացակայությունը
- փողոցների ոչ լարժեք լուսավորություն
- Գազաֆիկացման բացակայություն
- Վթարային շենքի առկայություն/եռահարկ բազմաբնակելի/

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ թվով աշխատուժ
- Սահմանամերձ աշխարհագրական դիրք
- Երևան-Մեղրի մայրուղի
- Երևան-Երասխ երկաթգծի գոյությունը և երկաթգծի կայարանը
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հանրավորությունը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
Համայնքին սպառնացող առաջնահերթ վտանգներն են.
- Բնակչության արտահոսքը, արտագաղթ
- Ֆիզիկական անձանցից հողի վարձավճարների գանձումը
- Տնամերձ հողամասերի անմշակելիությունը
- Աղքատության բարձր մակարդակ
- Գործազրկության բարձր մակարդակ
- Սոցիալապես անապահով ընտանիքների թիվ
- Ներդրումների անբավարար մակարդակ
- Շրջակա միջավայրի նկատմամբ անտարբերություն
- Հայ ադրբեջանական սահմանի անկայունություն
- Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը

1.16 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային շնորհիվ համայնքի պաշտոնական կայքի՝ erasxgp.am, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին:Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, տեղադրվում են համայնքի պաշտոնական կայքում, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը: Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք

սեռապես կապաստես բաղրչսերը ապելը ակտիվ համակցությամբ
ինքնակառավարմանը:

1.17 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է:Համայնքը ունի բնակչության տարահանման հանձնաժողով, բնակչության տարահանման գործողությունների պլան:

Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, համայնքին սպառնացող աղետների ռիսկի կանխմանը :

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող արտադրական ՍՊԸ-ի և ԱՁ-ների, առևտրի մանր կետերի,որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Սակայն համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես այնքան էլ բարվոք չէ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ , ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երասխ համայնքի տեսլականը (հեռահար նպատակը) համայնքի կայուն զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել առաջիկա տարիների ընթացքում:

2.2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

համայնքի հնգամյա զարգացման ռազմավարությունը հետևյալն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության զբաղվածության, սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ: Համայնքի ռազմավարական նպատակներն են՝

1. Առաջարկել ՀՀ կառավարությանը՝ պարտադրել նախկինում չնչին զումարներով սեփականաշնորհած արտադրական տարածքների սեփականատերերին իրենց տարածքները ծառայեցնեն աշխատատեղ ստեղծելու նպատակովով կամ վաճառեն այն անձանց ովքեր ցանկություն կհայտնեն ձեռք բերել շինությունները և ծառայեցնեն աշխատատեղ ստեղծելով:
2. Առաջարկել գործարաներին օգտվել ՀՀ կառավարության կողմից տրված հարկային արտոնություններից և ներդրումներ կատարել Երասխ համայնքում՝ ստեղծելով աշխատատեղ:
3. Առաջարկել՝ Հանքային ջրերի, Հայ գյուղ քիմիա գործարանների սեփականատերերին իրենց հիմնարկների վարչական տարածքները ծառայեցնեն , հիմնելով մեկ այլ արտադրություն՝ աշխատեն և աշատեցնեն բնակչությանը՝ խթանելով համայնքի բնակչության զբաղվածությանը:
4. ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի աջակցությամբ Երասխ համայնքում դպրոցի ոմբակոծված մասնաշենքը վերանորոգել և 1ին հարկը ծառայեցնել մսուր-մանկապարտեզ.
5. ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի աջակցությամբ և համայնքապետարանի որոշակի համաֆինասավորմամբ համայնքապետարանի կիսակառույց տիպային շենքի շինարարությունը ավարտել և այնտեղ կտեղակայվեն՝ համայնքապետարանի աշխատակազմը, գրադարանը, փոստային բաժանմունքը, բուժ ամբուլատորիան:

6. Համայնքապետարանի և բարեգործների աջակցությամբ կիսակառույց շենքի դիմաց կառուցվի խաղահրապարակ, սպորտ հրապարակ՝ մինի ֆուտբոլի դաշտով:
7. Արարատի մարզպետարանի աջակցությամբ և համայնքապետարանի միջոցներով տարեց տարի խճապատվի ներհամայնքային ճանապարհները:
8. ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի աջակցությամբ գազաֆիկացվի համայնքը.
9. ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի աջակցությամբ վերանորոգվի դպրոցը:
10. Համայնքապետարանի միջոցներով տարեց տարի ավելացվեն փողոցային լուսավորությունը,փոխվի և վերանորոգվի տեխնիկական նպատակներով և տնամերձ հողամասերի ոռոգման ջրագծի ցանցը:
11. Զարգացնել տեղական ինքնակառավարումը
12. Զարգացնել մարդկային կապիտալը

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- բնակչության կենսական շահերի ապահովումը,
- տեղական ինքնակառավարման համակարգի որակի և արդյունավետության բարձրացումը
- գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը
- առողջ ապրելակերպի խրախուսումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների մշակում:
- Երասխ համայնքում դպրոցի ռմբակոծված մասնաշենքը վերանորոգել՝ 1-ին հարկը ծառայեցնել մսուր- մանկապարտեզ 25-30 երեխայի.
- Կիսակառույց գյուղապետարանի շենքի շինարարության ավարտ և շահագործում, շենքում տեղակայվելով՝ գյուղապետարանի աշխատակազմը, գրադարանը, բուժ ամբուլատորիան, փոստային բաժանմունքը:
- Համայնքի դպրոցի վերանորոգում.
- համայնքի ներտնտեսային գազաֆիկացման ցանցի կառուցում
- միջոցներ ձեռնարկել՝ պարտադրելու, խնդրելու նախկինում չնչին գումարներով սեփականաշնորհած արտադրական տարածքների սեփականատերերին իրենց տարածքները ծառայեցնեն մեկ այլ արտադրանքի ստեղծելու նպատակովով կամ վաճառեն այն անձանց ովքեր ցանկություն կհայտնեն ձեռք բերել շինությունները և ծառայեցնեն արտադրություն հիմնելուն աշխատատեղ ստեղծելուն:
- Վեդի ներքին-Արփա գոտում դաշտերի ոռոգման ցանցի՝ կիսախողովակների վերանորոգում փոխարինում՝ ջրի կորստի նվազեցում:
- Մերձ-Արաքսյան գոտում /դեպի 13րդ ուղեկալ/ դաշտերի ոռոգման ցանցի՝ կիսախողովակներ անցկացում մշակովի հողերի ավելացում:
- Դրենաժների մաքրում հողերը աղակալումից մաքրում
- Կիսակառույց բնակելի տների շինարարության ավարտ բնակչության արտագաղթի կանխում
- Ցածր տոկոսադրույթներով երկարաժամկետ վարկերի տրամադրում՝ բնակչությանը, զարգացնելով գյուղատնտեսությունը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Կատարելով համայնքի 2016-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2014-15թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2016թ. ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

Աղյուսակ 1. Համայնքի 2016թ. բյուջեի մուտքերի նախատեսված ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի նվանումը	2016թ. Նախատ.	2017թ.. կանխ.	2018թ.. կանխ..	2019թ. Կանխ	2020թ. Կանխ	2(Կ
1	2	3	4	6	7	8	
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	29368,8	24481,4	24601,4	24801,4	25001,4	2
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	2479,1	2499,1	2699,1	2709,1	2719,1	
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	917,1	917,1	917,1	917,1	917,1	
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	245,7	245,7	245,7	245,7	245,7	
	Հողի հարկ	671,4	671,4	671,4	671,4	671,4	
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	1562,0	1582,0	1682,0	1782,0	1882,0	
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1100,0	1100,0	1200,0	1300,0	1400,0	
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	462, 0	482,0	482,0	482,0	482,0	
	Տեղական տուրքեր	462,0	482,0	482,0	482,0	482,0	
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ						
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	15959,2	17131,5	17231,5	17331,5	17431,5	
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական						

	դրամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	5959,2	17131,5	17231,5	17331,5	17431,5	1
³)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	5545,7	16432,7	16532,7	16632,7	16732,7	1
µ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	413,5	698,8	698,8	698,8	698,8	
·)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
2.6	Պետական բյուջեից տրամադրվոց կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ						
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	4850,8	4850,8	4850,8	4850,8	4850,8	4
3.1	Տոկոսներ						
3.2	Շահաբաժիններ						
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	4850,8	4850,8	4850,8	4850,8	4850,8	4
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	4850,8	4850,8	4850,8	4850,8	4850,8	4
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր						
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	49					
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ						
	Վարձատրվող հասարակական աշխատանքներ						
3.5	Վարչական գանձումներ						

	Տեղական վճարներ						
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ						
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից						
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ						
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից						

Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)						
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր						
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						
	Շարժական գույքի իրացումից մուտքեր						
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր						
2.	Պաշարների իրացումից մուտքեր						
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր						
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր						
	Հողի իրացումից մուտքեր						
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր						

	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	6079,7					

.	ՍՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՏԻ (1+2)						
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
1.1	Արժեթղթեր						
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր						
	-հիմնական գումարի մարում						
1.2	Վարկեր						
	-վարկերի ստացում						
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում						
1.3	Փոխատվություններ						
	-բյուջետային փոխատվությունների ստացում						
	-ստացված փոխատվությունների գումարի մարում						
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	6079,7					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն						
2.2	Փոխատվություններ						
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր						
	-փոխատվությունների տրամադրում						
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	6079,7					

Համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր՝ հիմնականում համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից համայնքի ֆոնդային բյուջե հատկացումների հաշվին, ինչպես նաև հողերի իրացումից մուտքերի հաշվին:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (7 հաստիքային միավոր) 2016 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 995,0 հազ. դրամ իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 15480,0հազ. դրամ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ 2017-2021թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսեր կատարելու համար:

4.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՊԱՍԵՐԻ ՑԱՆԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, համայնքի ղեկավարին կից գործող ՀՁՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 1)՝ ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀՁՀԾ-ում:

Աղյուսակ 1. Համայնքի 2017-21թթ. ՀՁՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

/h	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1	Համայնքի գլխավոր հատակագիծ	Համայնքապետ	3000.0
2	Սեսմիկ ռիսկերի միջոցառում	Համայնքապետ	
3	Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում	Համայնքապետ	4000.0
4	Խմելու ջրագծերի վերանորոգում	Համայնքապետ	
5	Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում	Համայնքապետ	2000,0
6	Հիմնական դպրոցի հիմնանորոգում	Համայնքապետ	60000,0
7	Ասֆալտի փոսային նորոգումներ	Համայնքապետ	1000.0
8	Փողոցների կոպճապատում	Համայնքապետ	700.0
9	Համայնքի գերեզմանատան մասնակի ցանկապատի կառուցում	Համայնքապետ	1000.0

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀՁՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,

- որսապաս սրջոցներ (եսթակառուցվածքների) գնահատում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀՋՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով Խորհրդակցական մարմինն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

Ինչպես երևում է ՀՋՀԾ-ի 3-րդ բաժնի աղյուսակ 1-ից, համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը հնգամյա հատվածում կազմելու են հազար դրամ: Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ ՀՋՀԾ-ում հնարավոր է ներառել ծրագրեր միայն նշված գումարի սահմաններում: Համայնքի մանկապարտեզի, մշակույթի տան, ճանապարհի կապիտալ նորոգման ծախսերի համար նախատեսվում է դիմել ՀՀ Կառավարությանը կամ դոնոր կազմակերպություններին:

Աղյուսակ 6. Համայնքի 2016-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների						Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2016	2017	2018	2019	2020	2021	Համայնքի բիբյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե
1.	Համայնքի գլխավոր հատակագիծ	Հատ		3000.0						3000.0	1000.0		2000.0
2	Սեսմիկ ռիսկերի միջոցառում	Հատ											
3	Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում	կմ		4000.0		1000.0	1000.0	1000.0	1000.0		3000,0	1000.0	
4	Խմելու ջրագծերի վերանորոգում	կմ											
5	Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում	քմ		2000,0		1000,0	1000,0				2000,0		
6	Հիմնական դպրոցի հիմնանորոգում	քմ		60000,0				30000,0	30000,0				60000,0
7	Ասֆալտի փոսային նորոգումներ	կմ		1000.0			1000,0				1000,0		
8	Փողոցների կոպճապատում	կմ		700.0		300,0	400,0				700,0		
9	Համայնքի գերեզմանատան մասնակի ցանկապատի կառուցում	Քմ		1000.0			400,0	400,0	200,0		1000,0		
	Ընդամենը			71700,0		2300.0	3800.0	31400,0	31200.0	3000.0	8700.0	1000,0	62000.0

Աղյուսակ 3. Համայնքի 2016-2020 թ.թ. բյուջեների մուտքերի և դրանց հաշվին կատարվող ընդհանուր ու ոլորտային ծրագրերի ծախսերի ցուցանիշների համեմատությունը և վերլուծությունը

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	2016	2017	2018	2019	2020	2021
1.	**Համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը*, այդ թվում՝**	29368,8	24481,4	24601,4	24801,4	25001,4	25201,4
1.1	Վարչական բյուջեի ընդհանուր մուտքերը	23289.1	24481,4	24601,4	24801,4	25001,4	25201,4
1.2	Ֆոնդային բյուջեի ընդհանուր մուտքերը, այդ թվում՝	6079.7	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը	0	0	0	0	0	0
2.	**Համայնքի ընդհանուր և ոլորտային ծրագրերի ծախսերը, այդ թվում՝**	29368.8	24481.4	24601.4	24801.4	25001.4	25201.4
2.1	Ընթացիկ ծախսեր	29368.8	24481.4	24601.4	24801.4	25001.4	25201.4
2.2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	0	0	0	0	0	0
3.	**Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝**	805.2	557.5	811,5	811,5	911,5	911,5
3.1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	805.2	557.5	811.5	811.5	911.5	911.5
3.2	Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ	0	0	0	0	0	0

հազ. դրամ

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր մուտքերի մեջ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Համայնքի տարածական զարգացումն ապահովող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից ոչինչ չկա համայնքապետարանում և քանի որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն համայնքն է, ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները, համայնքի բյուջեով նախատեսելու համար:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2016-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- սահմանել վերահսկողություն համայնքի բնակավայրերի ջրամատակարարման ջրային ավազաններում՝ արգելելու անասունների մուտքն ավազաններ, կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,

- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել «Մաքուր համայնք» կարգախոսով 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման աշխատանքներ, դրանց ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Չնայած ՀՀ գործող օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում առայժմ պարտադիր լիազորություններ գրեթե չունեն, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ 2016 թվականի հուլիսի 29-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2016-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- աջակցել համայնքում նոր արտադրություններ և աշխատատեղեր ստեղծելու նախաձեռնություն ցուցաբերող գործարարներին՝ տրամադրելով նրանց գործունեություն իրականացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալման, տեղական տուրքերի և վճարների գծով արտոնություններ,
- համայնքում խթանել գյուղատնտեսության, անասնապահական և թռչնապահական մթերքների (մասնավորապես՝ գյուղմթերքի, կաթի, մսի, ձվի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի և չրերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար նորոգել և բարեկարգել միջհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգերեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի աղետների ռիսկերի կառավարման հարցերում շարունակել համագործակցությունը հանրապետական համապատասխան մարմինների հետ՝ մասնավորապես ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ,
- ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում պետք է կազմվի համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը,

ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,

- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- բերքի պահպանման նպատակով բնակավայրերում հակակարկտային կայաններ տեղադրելու միջոցառումների ձեռնարկում՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ) անհրաժեշտ միջոցների հայթայթում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2016-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,
- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանն ուղղված միջոցառումներ

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-ի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Երասխ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի ՏԻՄ-ի, աշխատակազմի կողմից: Համայնքի 2016-2020թթ. ՀԶՀԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից: ՀԶՀԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Արարատի մարզպետարանիհետ): Այսպիսով, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՕՂԻԿՅԱՆ